ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/37

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 19.09.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 19.09.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել էր հետևյալը.

«Սույնով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պաշտոնապես ներկայացնում է բողոք՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման անցկացման ընթացքում գնահատող հանձնաժողովի գործողությունների և օրենքի կոպիտ խախտման դեմ:

2017թ. օգոստոսի 24-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ARMEPS համակարգի միջոցով info@armeps.am պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից «ԳՀԱՊՁԲ-

2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային ձևով անցկացվող գնանշման հարցման հրավերը (Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.2531573] ՄՀ-ի հրապարակում), որի 9-րդ չափաբաժնով նախատեսվում էր Պատվիրատուի կարիքների համար ձեռք բերել Պրոյեկտոր/թվային/II:

Ընկերությունը հրավերով նախատեսված ժամկետում և կարգով ARMEPS համակարգի միջոցով ներկայացրել է իր հայտը 9-րդ չափաբաժնի մասով և 2017թ. սեպտեմբերի 1-ին գնահատող հանձնաժողովի քարտուղար Աննա Հարությունյանից՝ procurement3.ysmu@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է գնանշման հարցման Արձանագրություն N2 առ 31.08.2017թ.:

2017թ. սեպտեմբերի 5-ին գնահատող հանձնաժողովի քարտուղար Աննա Հարությունյանից procurement3.ysmu@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից Ընկերությունը ստացել է գնանշման հարցման Արձանագրություն N3 առ 05.09.2017թ., որտեղ նշված 9-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցարած մասնակից է ճանաչվել «Վանդիստ» ՍՊԸ-ն:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշումով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի VII-րդ մասի 32 կետի 4-րդ ենթակետի և Հրավերի 8.8 կետի պահանջներով՝ 2017թ. սեպտեմբերի 4-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստով դիմել է գնահատող հանձնաժողովի քարտուղար Աննա Հարությունյանին՝ խնդրելով տրամադրել 9-րդ չափաբաժնի համար հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների գնային առաջարկների սկանավորված պատճենները, իսկ հասանելի լինելուն պես նաև տրամադրել ընթացակարգի 9-րդ չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված Հրավերի N 6 հավելվածին կցվող՝ առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր) պարունակող, N 6.1 հավելվածի ամբողջական սկանավորված պատճենը:

Երկար նամակագրությունից հետո, վերջապես, 2017թ. սեպտեմբերի 8-ին, գնահատող հանձնաժողովի քարտուղար Աննա Հարությունյանից procurement3.ysmu@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից ստացվել է 9-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հրավերի N 6 հավելվածին կցվող՝ առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր) պարունակող, N 6.1 հավելվածի ամբողջական սկանավորված պատճենը:

Ուսումնասիրելով ներկայացված փաստաթուղթը «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 2017թ. սեպտեմբերի 9-ին procurement3.ysmu@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեով տեղեկացրել է գնահատող հանձնաժողովի քարտուղար Աննա Հարությունյանին, որ համաձայն արտադրողի պաշտոնական https://www.benq.com/en/projector/business/mw705/specifications.html WEB կայքի, առաջարկված BenQ MW705 մակնիշի պրոյեկտորը լամպի աշխատանքի ժամկետի ցուցանիշով (ընդամենը 3000 ժամ լամպի կյանք, պահանջված 4000 լյումեն պայծառությամբ լուսային հոսքի դեպքում) պարզապես չի համապատասխանում Հրավերի՝ հստակ շարադրված և տարակերպ մեկնաբանություն բացառող մինիմալ տեխնիկական պահանջներին՝ պայծառությունը՝ առնվազն 4000 լյումեն, լամպի աշխատանքի ժամկետն առնվազն՝ 4000 ժամ:

Սակայն, գնահատող հանձնաժողովը՝ անտեսելով վերը նշված տեղեկություններն և տրված բացատրությունները 2017թ. սեպտեմբերի 15-ին, ժամը 15:09-ին՝ procurement3.ysmu@gmail.com էլեկտրոնային փոստով մասնակիցներին է ուղարկել գնահատատող հանձնաժողովի 13.09.2017թ. նիստի N4 Արձանագրությունը, որի 2-րդ կետով կայացված որոշմամբ 9-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Վանդիստ» ՍՊԸ-ն:

Հարկ ենք համարում նշել նաև, որ, համաձայն արտադրողի եվրոպական http://www.benq.eu/product/projector/mw705/downloads/ WEB կայքում հրապարակված պաշտոնական տեղեկատվական բրոշուրի BenQ MW705 պրոյեկտորի լամպի աշխատանքի ժամկետը նույնիսկ կազմում է ընդամենը 2500 ժամ պահանջված 4000 լյումեն պայծառությամբ լուսային հոսքի դեպքում:

Ի լրումն վերոհիշյալի, կից ներկայացնում ենք նաև BenQ MW705 պրոյեկտորի արտադրողի պաշտոնական «Օգտագործողի ձեռնարկ»-ից (User Manual/Руководство пользователя) երկու քաղվածք անգլերեն և ռուսերեն լեզուներով, որտեղ հստակ բացատրվում է տեխնիկական բրոշուրում տրված լամպի ռեժիմների աշխատանքը: Մասնավորապես.

- լամպի աշխատանքի «Նորմալ/Normal» ռեժիմում պրոյեկտորը ապահովում է հենց պահանջված 4000 լյումեն պայաճառություն (3000 ժամ լամպի կյանք).

- լամպի աշխատանքի «Էկո/Eco» ռեժիմում պրոյեկտորի պայծառությունը՝ համաձայն արտադրողի վերը նշված պաշտոնական տեղեկատվական բրոշուրի, նվազում է 20% և համապատասխանաբար կազմում է ընդամենը 3200 լյումեն, և լամպի աշխատանքային ժամերն այս ռեժիմում արդեն իսկ հասնում են 4000 ժամի (սովորաբար պրոյեկտորի

պայծառությունը «Էկո/Eco» ռեժիմում՝ կախված արտադրողից և մակնիշից նվազում է միջինը 20%- 30%).

- լամպի աշխատանքի «Սմարթ Էկո/Smart Eco» և «Լամպի խնայողություն/Lamp save» ռեժիմներում պրոյեկտորի պայծառությունը՝ համաձայն նշված տեղեկատվական բրոշուրի՝ նվազում է արդեն մինչև 70% և համապատասխանաբար կազմում ընդամենը 1200 լյումեն, ինչի շնորհիվ պրոյեկտորի լամպը աշխատում է արդեն իսկ 7500 ժամ:

Հատուկ բևեռում ենք Գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն այն փաստին, որ լամպի աշխատանքի ցանկացած ռեժիմում, որն իր անվանման մեջ ունի «Էկո/Eco» կամ նմանատիպ բառ՝ պրոյեկտորի լուսային հոսքը (պայծառությունը) հատուկ նվազեցվում է, որպեսզի արհեստականորեն երկարացվի բավականին թանկառժեք լամպի հենց աշխատանքային ժամերը (լամպի կյանքը երկարացվում է նրան սնուցող հոսանքի և համապատասխանաբար լամպի պայծառության նվազեցման միջոցով):

Երկրորդ կետը, որով առաջարկված BenQ MW705 պրոյեկտորը նույնպես չի համապատասխանում Հրավերի մինիմալ տեխնիկական պահանջներին այն է, որ տեխնիկական բնութագրով պահանջվող 2 հատ DSub 15pin մուտքերի (Dsub 15pin x 2) փոխարեն, առաջարկված BenQ MW705 պրոյեկտորն ունի ընդամենը 1 (մեկ) հատ Dsub 15pin մուտք, ինչն ավելի քան հստակ նշված է արտադրողի բոլոր վերոհիշյալ տեխնիկական փաստաթղթերում:

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից, գտնում ենք, որ Պատվիրատուն ուղղակիորեն և կոպիտ խախտել է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի՝

- 5-րդ մասի 2-րդ կետը, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը...»

- 6-րդ մասը, այն է՝ «...հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված...»:

Բացի այդ, խախտվել են ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի VII բաժնի ՝

- 46-րդ կետը, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ

անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները...».

- 47-րդ կետը, այն է՝ «...առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ... սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...»:

Ընկերությունը ներկայացրել է հետևյալ պահանջը՝

Անվավեր ճանաչել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման 13.09.2017թ. N4 Արձանագրության 2-րդ կետով՝ «Վանդիստ» ՍՊԸ-ին 9-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էին Ընկերության տեխնիկական տնօրեն Էդուարդ Սաղաթելյանը և տեխնիկական բաժնի պետ Արամ Նիգարյանը:

2. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 22.09.2017թ. թիվ 1229 գրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 19.09.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 19.09.2017թ. ներկայացված բողոքով նշված հայտարարությունների, հայտնում եմ Ձեզ, որ «ԳՀԱՊՁԲ-2017-12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի մասնկահիցների հայտերը գնահատավել են պահպանելով գործող գնումների մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի սահմանված պահանջները:

Սույն թվականի օգոստոսի 24-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից էլեկտրոնային «Armeps» համակարգի միջոցով, ինչպես նաև գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է «ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը: Բողոքի առարկա հանդիսացող հրավերի 9-րդ չափաբաժնով պահանջվող գնման առարկայի տեխնիկական պահանջները սահմանվել են հստակ, առանց երկակի մեկնաբանության և չեն պարունակել հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին:

«ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնով պահանջվող Պրոյեկտոր թվային II ապրանքատեսակի մասով հայտ են ներկայացրել թվով չորս մասնակից: «Ֆիրմա-Ալֆա» ՍՊԸ-ն 9-րդ չափաբաժնի մասով զբաղեցրել է չորրոդ տեղը:

2017թ. օգոստոսի 31-ին հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 40-րդ կետի 5-ին ենթակետ <<գ>> պարբերությունը՝ նիստը կասեցվել է երկու աշխատանքային օրով և հրավիրվել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների նիստ, քանի որ ընթացակարգի 11-րդ չափաբաժնի համար մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում էին տվյալ գնումը իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 43-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ 01.09.2017թ, հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել է տեղեկագրում և ուղարկել հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Հանձնաժողովի 05.09.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության թիվ 2 որոշմամբ, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդված 2-րդ կետի, «Վանդիստ» ՍՊ ընկերությունը հրավերի 9-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Նույն արձանագրության թիվ 3 որոշմամբ նշվել է, որ ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ նիստը կհրավիրվի ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից համապատասխան հավաստման ստացմանը, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից համապատասխան հիմքերի ներկայացման

օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին մասնակիցները կտեղեկացվեն լրացուցիչ:

Ուսումնասիրելով տվյալ գնման գործընթացի կազմակերպման ժամկետային փուլերը, կարելի է փաստել, որ հանձնաժողովի քարտուղարը «Ֆիրմա-Ալֆա» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը տրամադրել է սահմանված ժամկետներում, քանի որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին որակավորման փաստաթղթերի ներկայացման պահանջի մեկնարկը տրվել է 05.09.2017 թվականին, ժամկետը սահմանվել է երեք աշխատանքային օր, իսկ «Ֆիրմա-Ալֆա» ՍՊԸ-ին փաստաթղթերը տրամադրվել են 08.09.2017 թվականին:

Սույն թվականի սեպտեմբերի 13-ին տեղի է ունեցել «ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփիչ նիստը: Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից 9-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական պահանջները: Նշեմ, որ դրանք լիովին համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական պահանջներին:

«Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից բացի տեխնիկական տվյալներից ներկայացվել է նաև գնման առարկայի ապրանքային նշանը՝ BENQ MW 705:

Հրավերով սահմանված տեխնիկական պահանջներն են՝ Պռոյեկցիոն համակարգ- DLP դասի. պայծառությունը – առնվազն 4000 լյումեն, կոնտրաստը – 13000:1, օբյեկտիվ – F 22-24.1 մմ, պատկերի ֆորմատ – 4:3 հիմնական, 5 ֆորմատի հնարավորություն, իրական կետայնությունը - XGA դասի(1024 x 768) կետ, լամպի աշխատանքի ժամկետը առնվազն 4000 ժամ, տրապեցիայի կարգավորում, ինտերֆեյս-1 մուտք (Dsub 15pin x 2) տիպի, ելք(Dsub 15pin)տիպի, HDMI տիպի, առաստաղին ամրացնելու հնարավորություն, մեկ տարվա երաշխիք, սնուցումը-220v:

«Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական տվյալներն են՝ Պռոյեկցիոն համակարգ- DLP դասի. պայծառությունը – 4000 լյումեն, կոնտրաստը –13000:1, օբյեկտիվ – F 22-24.1 մմ, պատկերի ֆորմատ – 4:3 հիմնական, 5 ֆորմատի հնարավորություն, իրական կետայնությունը - XGA դասի(1024 x 768) կետ, լամպի աշխատանքի ժամկետը 4000 ժամ, տրապեցիայի կարգավորում, ինտերֆեյս-1 մուտք (Dsub 15pin x 2) տիպի, ելք (Dsub 15pin)տիպի, HDMI տիպի, առաստաղին ամրացնելու հնարավորություն, մեկ տարվա երաշխիք, սնուցումը-220v:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերությունը բողոքով նշում է, որ ս.թ. սեպտեմբերի 8-ին ստացել է իր կողմից պահանաջվող «Վանդիստ» ՍՊ ընկերության հրավերի 9-րդ չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը, որն իր դիրքորոշմամբ հանձնաժողովի

կողմից գնահատվել է օրենսդրության խախտմամբ, և պաշտոնապես պահանջ ներկայացրել «ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման 13.09.2017թ. թիվ 4 արձանագրության 2-րդ կետով «Վանդիստ» ՍՊ ընկերությանը հրավերի 9-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու որոշումը համարել անվավեր:

Սույն թվականի սեպտեմբերի 9-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է գնահատող հանձնաժողովի կողմից չպահանջվող լրացուցիչ տեղեկատվություն, որում նշվում է «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական չափորոշիչների և ապրանքային նշանի անհամապատասխանության հավանականության մասին: Որպես հիմնավորում ներկայացվել են «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքային նշանի արտադրողի էլեկտրոնային կայքից պատճենահանված տվյալներ՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), իսկ 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

«ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը չի պարունակում հղում որևէ ապրանքային նշանին կամ արտադրողին, պահանջվող տվյալները սահմանված են հստակ, առանց երկակի մեկնաբանության: «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնման

առարկայի տեխնիկական տվյալները լիովին համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Մասնակցի հայտը գնահատելու համար հիմք են հանդիսանում գնումների գործընթացի կազմակերպման կարգով և հրավերով սահմանված պահանջները, այսինքն, առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացված տվյալները, որոնք կնքված են տվյալ մասնակցի կողմից: «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացված՝ գնահատող հանձնաժողովի կողմից չպահանջված ինտերնետային փաստաթղթերը, այն էլ՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով, չեն կարող հիմք հանդիսանալ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը մերժելու հարցում: Բացի այդ, գործող գնումների օրենսդրությունը չի սահմանում Պատվիրատուների համար ոչ մի պարտադրող պահանջ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական տվյալների և ապրանքային նշանի միմյանց համապատասխանությունը ստուգելու վերաբերյալ, ինչի մասին վկայում է նաև նման խնդրի առաջացման դեպքում համապատասխանությունը ստուգելու օրենսդրությամբ սահմանված մեթոդական ցուցումների բացակայությունը:

Հաշվի առնելով, որ գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են բոլոր պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, գնահատող հանձնաժողովը չի ունեցել ոչ մի իրավական հիմք մասնակցի հայտը մերժելու համար:

Տվյալ մասնակցի հայտը մերժելը կդիտարկվեր իբրև գնումների օրենսդրության կոպիտ խախտում և մասնակցի շահերի ոտնահարում, և ինչու ոչ նաև Պատվիրատուի՝ քանի որ ընտրված մասնակցի կողմից 9-րդ չափաբաժնի մասով՝ Պրոյեկտոր/թվային/ ապրանքատեսակի միավորի գինը կազմում է 298 950 ՀՀ դրամ, իսկ բողոքարկող կողմի ներկայացված միավորի գինը կազմում է 522 000 ՀՀ դրամ, որը զբաղեցրել է տվյալ չափաբաժնի մասով գին ներկայացրած մասնակիցների թվում չորրորդ տեղը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը, գնահատող հանձնաժողովի 13.09.2017թ. նիստի թիվ 2 որոշմամբ «Վանդիստ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Ի պատասխան «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի մտահոգությանը, հայտնում ենք, որ մասնակցի հետ պայմանգիր կնքելիս գնման առարկայի նկարագրությունը սահմանվում է հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական տվյալները: Գնման առարկայի մատակարարման ժամանակ անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում մատակարարին տրվում է սահմանված ժամկետում անհամապատասխանությունը շտկելու

հնարավորություն: Անհամապատասխանությունը չշտկելու դեպքում պայմանագիրը լուծվում է, և մասնակցի տվյալները ներկայացվում են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում եմ «Ֆիրմա Ալֆա» ՍՊ ընկերության կողմից ներկայավցված ԳԲԽ-ԷՍ-2017/37 բողոքը մերժել:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Ռուբեն Եգանյանը և Աննա Հարությունյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 19.09.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, Բողոքի վերաբերյալ Պատվիրատուի 22.09.2017թ. թիվ 1229 գրությամբ ներկայացված դիրքորոշումը, «ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև հրավեր), «ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 31.08.2017թ. նիստի թիվ 2, 05.09.2017թ. նիստի թիվ 3 և 13.09.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից 24.08.2017թ. էլեկտրոնային «Armeps» համակարգի միջոցով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2017/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն և «Վանդիստ» ՍՊԸ-:

Հանձնաժողովը 05.09.2017թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշել է «Վանդիստ» ՍՊԸ-ին 9-րդ չափաբաժնի մասով ճանաչել 1-ին տեղն զբաղեցրած մասնակից:

13.09.2017թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «Վանդիստ» ՍՊԸ-ին նույն չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Վանդիստ» ՍՊԸ-ն, մինչդեռ վերջինիս կողմից առաջարկված ապրանքը՝ «BenQ MW 705» մակնիշի պրոյեկտորը, լամպի աշխատանքի ժամկետի ցուցանիշով (ընդամենը 3000 ժամ լամպի կյանք, պահանջված 4000 լյումեն պայծառությամբ լուսային հոսքի դեպքում) չի համապատասխանում Հրավերով սահմանված՝ նվազագույն տեխնիկական պահանջներին, մասնավորապես՝ պայծառությունը՝ առնվազն 4000 լյումեն, լամպի աշխատանքի ժամկետն առնվազն՝ 4000 ժամ: Նշված փաստը, ըստ Ընկերության ներկայացուցչի, հանդիսանում է Պատվիրատուի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջի կոպիտ խախտում:

Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ նման եզրահանգման գալու համար հիմք է հանդիսացել «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված BenQ MW 705 մակնիշի պրոյեկտորի բնութագրի վերաբերյալ /https://www.benq.com/en/projector/business/mw705/specifications.html/ ինտերնետային կայքում զետեղված տեղեկատվության և Հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրի համեմատական վերլուծությունը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ թեև որպես հիմնավորում Բողոքով ներկայացվել են «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքային նշանի արտադրողի էլեկտրոնային կայքից պատճենահանված տվյալներ՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով, այնուամենայնիվ, ներկայացված տվյալների ուսումնասիրությունից անգամ պարզ երևում է, որ դրանք ամբողջովին համապատասխանում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց նաև, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին ներկայացված՝ ինտերնետային կայքում հրապարակված տեղեկատվությունը չի կարող հիմք հանդիսանալ առաջին տեղն զբաղեցրած և ընտրված մասնակցի հայտը մերժելու համար՝ հետևաբար, հաշվի առնելով, որ գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնով առաջին տեղն զբաղեցրած «Վանդիստ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերը գնահատվել են Հրավերի պահանջներին համապատասխանող, մասնակցի հայտը մերժելու համար Հանձնաժողովը ոչ մի իրավական հիմք չի ունեցել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են

գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի 'զ' պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ ապրանքների գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Վանդիստ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված՝ ապրանքի տեխնիկական բնութագրի հատկանիշներն՝ արձանագրում է, որ դրանք համապատասխանում են ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին:

Խորհուրդը գտնում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին ներկայացված՝ ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվությունը չի հանդիսանում պաշտոնական աղբյուրից ստացված տեղեկատվություն, կամ իրավասու մարմնի կողմից տրամադրված գրավոր եզրակացություն, հետևաբար Հանձնաժողովի կողմից այն չի կարող օգտագործվել՝ մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունն ստուգելու համար:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Վանդիստ» ՍՊԸ-ին ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 19.09.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ